

ինչպէս մեր ժօ դարու առակողն ընել
կու տայ յոպոպին (Գոշ՝ Առկ. 125). ու
րով Եզնկացին ալ ալլաբանօրէն կ'ուզէ՝
«անծորելի ծաղիկս ի ծոցս բանիս թա-
քուցանելով՝» հրապուրել իւր ունկնդիրքը
(Յհ. Եզկ. Ներբ. 90):

Բայց այրերն ալ կանանց հաւասար
մրցակից էին սոյն պէրանաց մէջ. զի ըստ
Մանդակունւոյն՝ բոլոր կոչնականք իսկ
սովոր էին «յօժանկ» (34). եւ անոնց կ'ուղ-
ղէ մարգարէական յանդիմանութիւնը՝ թէ
«վայ որ ըմպեն զինի յարբենալ, եւ ա-
նոյշ իշդով օծանին» (136): Դրաստամատի
հոգածութեանց մէջ էր յետ լուացման «օ-
ծանկ» զԱրշակ (Փաւս. 207). եւ Ս. Ներ-
սէս իւր հրաւիրած աղքատաց անգամ զանց
չէր ընել այս խնամքը (նոյն, 77), ան-
շուշտ պատուասիրութեան մէջ զանոնք
հարստներէն չխտրելու փափուկ մտածու-
թեամբ. զի այլուստ գիտենք՝ որ օծումն
անհաշտ էր չքաւորութեան վիճակին հետ
(աստ, 153): Դարեր կ'անցնին, եւ հին
սովորոյթը կը տեւէ տակաւին. «Ո՞ւր են
իշդն անուշից», կը հարցնէր Գրիգոր վրդ-
մեռնող մեծատան (Ողբ): — Իսկ օծումը
կրկին էր ըստ Նարեկացւոյն. մին «ի մար-
մին», որ կը լինէր անշուշտ յետ լուաց-
ման, եւ միւսն «ի հանդերձս» զանոնք